http://www.das-tierlexikon.de/

Լայնականջ ոզնի
(Hemiechinus auritus)

Կարգավիճակը

Հազվագյուտ տեսակ է, որի թվաքանակն անշեղորեն կրճատվում է:

Բնակության արեալը

Տարածված է Մեղրուց մինչև Թալինի միջև ընկած տարածաշրջաններում:

Արտաքին նկարագիրը

Մարմնի երկարությունը տատանվում է 14-23 սմ-ի սահմաններում, պոչինը՝ 1.7-3.5 սմ: Սովորական ոզնուց տարբերվում է մեծ ականջներով (2.9-4.9 սմ): Գլխի վրա չունի անմազ շերտ: Մարմնի կողքերը և որովայնի կեսը պատած են կարճ, փափուկ մազերով, որոնք ունեն բաց դարչնամոխրավուն կամ սպիտակավուն գունավորում, բաց երանգով:



http://www.ecosystema.ru

Կենսակերպը և տնտեսական նշանակությունը

Ապրում է կիսաանապատային և անապատային վայրերում: Հանդիպում է առավելապես խաղողի այգիներում: Հիմնականում ինքն է իր համար բներ պատրաստում, իսկ երբեմն էլ օգտագործում է այլ կենդանիների կողմից լքված հին բները: Ելնելով հողի կարծրությունից՝ բների խորությունը հասնում է 1.0-1.5 մ-ի: Սնվում է անողնաշարավորներով և մանր ողնաշարավոր կենդանիներով՝ միջատներով, մողեսներով, մկնանման կրծողներով, օձերով, թռչունների ձվերով և ձագերով, թափված մրգերով և հատապտուղներով: Լայնականջ ոզնին որսի է դուրս գալիս գիշերը: Հատկապես զարգացած է լսողությունը: Արտաքինից թվում է անվնաս, բայց, հանդիպելով խոշոր որսի, օր.՝ առնետի կամ օձի, կայծակնային արագությամբ և ճարպկությամբ հարձակվում է զոհի վրա՝ կծելով վերջինիս ծոծրակը: Ձմռանը քուն է մտնում:

Բազմացումը

Բազմանում է վաղ գարնանից սկսած մինչև ամռան կեսերը: Զուգավորման շրջանում արուները երգում են ցածր, միալար սուլոց հիշեցնող ձայնով: Հղիությունը տևում է 4-5 շաբաթ: Ունենում է 4-7 մերկ և կույր ձագ, որոնց մոտ մի քանի ժամ անց աճում են փափուկ փշեր: 2-3 շաբաթ անց բացվում են նրանց աչքերը: Մեկ ամսեկան հասակում կարողանում են ինքնուրույն սնվել: Սեռահասուն են դառնում 2 տարեկանում: Լայնականջ ոզնին հատուկ հոգատարություն չի ցուցաբերում իր ձագերի նկատմամբ: Վտանգի դեպքում մայրը սկզբում կծկվում է, իսկ այնուհետև անմիջապես փախչում, միայնակ թողնելով ձագերին: Մյուս կենսաբանական հատկանիշներով նման է սովորական ոզնուն:

Սահմանափակող գործոնները

Լայնականջ ոզնու թշնամիներն են՝ գիշատիչ կաթնասունները, ցերեկային և գիշերային գիշատիչ թռչունները:

Սույն հրատարակությունը իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ կողմից Նորվեգիայի Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) ֆինանսական աջակցությամբ:

Երևան 2008

ՀՀ, Երևան, 0019
Բաղրամյան պող., 24դ, 609 սենյակ
հեռ. / ֆաքս. (+37410) 523604
էլ. փոստ: office@awhhe.am